
3. 1-ին աստիճանի հավասարումների սխտեմի և քառակուսի յեռանդամի հետազոտությունը:

1. ին աստիճանի անհավասարություն:

4. Բեզուի թերեմը և նրա հետևանքները:

3, 4 և 6-րդ աստիճանի յերկանդամ հավասարումների լուծումը: Յեռանդամ հավասարումների լուծումը: Հետադարձ հավասարումներ:

ՅԵՐԿՐՍՉԱՓՈՒԹՅՈՒՆ

1. Բազմանկյուններ

Գաղափարը բազմանկյան մասին: Ուղիղ, թեք և կանոնավոր պրիզմա (հատվածակողմ): Զուգահեռանիստ, նրա նիստերի, կողերի և անկյունագծերի հատկությունը: Ուղղանկյուն զուգահեռանիստ անկյունագծի քառակուսին: Հատվածակողմի և զուգահեռանիստի մակերևույթը:

Լրիվ և հատած պիրամիդ (բուրգ): Բուրգի՝ հիմքին զուգահեռ հարթությամբ կարգածքի հատկությունները: Լրիվ և հատած բուրգի մակերևույթը:

Գաղափարը մարմնի ծավալի մասին: Ծավալի միավորը: Ուղղանկյուն զուգահեռանիստի և խորանարդի ծավալը: Ամեն մի հատվածակողմի ծավալը: Հավասարամեծ հիմքեր և հավասար բարձրություններ ունեցող բուրգերի ծավաները հավասար են: Յեռանկյան հատվածակողմի վերլուծումը յերեք հավասարամեծ բուրգերի:

Յեռանկյուն և բազմանկյուն բուրգերի ծավալը: Ապացուցել վոր

բուրգի ծավալը հավասար և յերկու լրիվ բուրգերի ծավալների ու արդի բուրգանայաց հարթություններով: Գլանի կողային և լրիվ մակերևույթը: Գլանի ծավալը (կրկնել և խորացնել սահմանների հարցը):

Ուղիղ կլոր կոն: Կոնի կարգածքները՝ առանցքով անցնող և առանցքին ուղղահայաց հարթություններով: Կոնի կողային և լրիվ մակերևույթը: Կոնի ծավալը:

Հատած կոն: Նրա կողային և լրիվ մակերևույթը: Հատած կոնի ծավալը:

Դուռնդ: Գնդի կարգածքը հարթություններով: Գնդին տարած շոշափող հարթությունը: Գնդի մեծ և փոքր շրջանները: Գնդի մակերևույթը: Գնդային սեկտորի ծավալը: Գնդային սեկտորի գոտու մակերեսույթը: Ընդհանուր գաղափար պատման մարմինների մասին:

Լուծել հաշվարկման և ապացուցման հարցերու խնդիրներ՝ թված բոլոր բաժիններից:

ՅԵՐԱԿՅՑՈՒՆԱԳԱՐԱԿԱՆ ՅԵՐԱԿՅՑՈՒՆԻՑ

1. Յեռանկյունների լուծումը

Յեռանկյունաշափական լոգարիթմական աղյուսակների գործածությունը: Ուղղանկյուն յեռանկյունների լուծումը լոգարիթմների ոգնությամբ: Սուրանկյուն յեռանկյան կողմերի և անկյունների մեջ յեղած առնչությունը:

Յեռանկյան շորջն արտագծած և յեռանկյանը ներգծած շրջանների շառավիղների արտահայտությունները: Սուրանկյուն յեռանկյունների լուծումը լոգարիթմների ոգնությամբ.

ա) Բառ մի կողմի և յերկու անկյան:

բ) Բառ յերկու կողմի և նրանցով կազմված անկյան:

գ) Բառ յերեք կողմի:

դ) Բառ յերկու կողմի և նրանցից մեկի դիմաց գտնվող անկյան: Մոլիկյդի բանաձեռ:

2. Հակադարձ օրդանային ֆունկցիաներ

Գաղափարը հակադարձ շրջանային ֆունկցիաների մասին: Հակադարձ ֆունկցիաների բազմանշանակությունը և նրանց գլխավոր նշանակությունը:

3. Յեռանկյունաշափական հավասարումների լուծումը

4. Յեռանկյունաշափակության կիրառումը՝ յերկրաչափությունից թե հարթաչափությունից և թե տարածաչափությունից) խնդիրներ և հարցեր լուծելիս:

Ծ Ր Ա Գ Ի Ր

Փ Ի Զ Ի Կ Ա

ԲԱՑԱՏՐԱԿԱՆ

Վոչ լրիվ միջնակարգ դպրոց վերջացնողները պետք ե անցնեն վոչ թե փեղիկայի վզրեն սիստեմատիկ կուրս, այլ վորոշ գիտելիքներ փեղիկայի բոլոր հիմնական բաժիններից: Հետևապես վոչ—լրիվ միջնակարգ դպրոցի փեղիկան պետք ե կազմի առաջին կոնցենտրու:

Սակայն այդ առաջին կոնցենտրում ամփոփվող գիտելիքները չպետք ե ներկայացնեն տարբեր շրջանների վերաբերող անջատանջատ պարզաբույն փաստերի հավաքածու, այլ պետք ե առաջարկվեն աշակերտությանը սիստեմի ձևով: Միայն սիստեմն ե, վոր ապահովում ե ինչպես գիտելիքների կուտակումը, նույնպես և յերկույթների բացարությունը, հետևապես և նրանց հասկացվելը: Իսկ երդ 7-րդ դասարաններում փեղիկայի դասավանդման խնդիրներից մեկն ե՝ հաղորդել աշակերտներին փեղիկային վերաբերող գիտելիքները ու սովորույթները, վորոնք հիմնվում են յերկույթների միջև զոյություն ունեցող կապը հասկանալու վրա, վորոնք սոցիալիստական հաստրակության ապագա կառուցողների ձևաքում պետք ե ծառայեն վորպես ազգու գործիք: Բացի զրանից, միայն սիստեմատիկ բացարությունը կարող ե պատկերացում տալ փեղիկայի մասին՝ վորպես գիտության մասին, և առաջին կոնցենտրում փեղիկայի դասավանդման խնդիրն աշակերտներին աստիճանաբար հաղորդակից դարձնել փեղիկային վորպես գիտության:

Տացարության հասարակու տարբեր սիստեմներից հիմնականում ընտրած ե յերկույթների կլասիֆիկացիայի ենդելայան սիստեմը շարժան բարդացում և առաջ առ առ կարգով: այդ սիստեմը յենթադրում է փեղիկական յերկույթների ուսումնասիրության, հետեւյալ կարգը՝ մեխանիկա, ջերմություն, ելեկտրականություն, լույս (սրանք են միայն յերեկույթների այն մասը, վորոնք կարող են մատչելի լինել բնույթի ուսումնասիրության):

Բնույթանուր առմամբ բացարության այսպիսի սիստեմ պահպան լույս՝ յերկու շեղում ե կատարված: Առաջին՝ սիստեմատիկ կուրսից առաջ տրվում ե փոքրիկ ներածություն, վորտեղ բացարություն ե, թե ինչ ե փեղիկական մարմինը, փեղիկական յերկույթը և մարմնի վի-

Ռյա տեղեկությունները մի կողմից անհրաժեշտ նախարարական են սիստեմատիկ կուրսի համար, մյուս կողմից՝ նրանք ավելի մատչելի լեն երդ դասարանի աշակերտների հասկացողության, քան մեխանիկայի առաջին գաղափարները. և վոր գլխավորն ե՝ նրանք, մեխանիկայի առաջին հարցերի հետ համեմատած, ավելի շուտ են հնարավորություն տալիս աշակերտներին եքսպերիմենտը հասկանալի դարձնելու և աշակերտների մեջ սովորելու հղոր ստիմուլ — հետաքրքրությունը և առաջացնելու:

Հենց այս լերկու մոտիվներով — մատչելիությամբ ու հետաքրքրություն հարուցելով և պայմանավորված նաև վերոհիշյալ յերկորդ շեղումը: Ամեն մի բաժնի սահմաններում պահպաներով վերը նշանացնադասուր կարգը, թույլատրված են տեղափոխումներ՝ հեշտից դեպի դժվարը, դիտելից, ավելի ծանոթից զեպի վերացականը գնալու ուղղությամբ:

Որինակ՝ առաջին բաժնում՝ մեխանիկայում նախ ուսումնասիրվում ե վոչ թե համաչափ շարժումը, վոր թեև շուրժման պարզագույն ձևն ե, բայց վոչ բոլորովին կոնկրետ ձևը, այլ նախ ուսումնասիրվում ե ամենահարածանոթ ուժը — ծանրության ուժը, թե ինչպես ե նա ազգում մարմնի վրա, մասնավորապես հեղուկների վրա (հիղրոստատիկայի սկիզբը) և գաղերի վրա (մինուլրաի ճնշում):

Ելեկտրականության բաժնում վորպես հիմք վերցրած են աշակերտներին շրջապատող յերեսույթները և ելեկտր. հոսանքի կիրառումները, և վոչ այն ելեկտր. յերեսույթները, վորոնք հեռու յեն ամիջական դիտություն:

Մատչելիության, հետաքրքրության և գիտելիության սույն պահանջները սահմանափակումներ են մացնում նաև դիտելիկատիկական յերկորդ պրինցիպի կիրառման մեջ: Այդպիսի պրինցիպ ե թեորիայի և պրակտիկայի միասնության պրինցիպը, վոր պետք ե զրված լինի ամեն մի ծրագրի կառուցման հիմքում:

Այս պրինցիպը փեղիկայի ծրագրում ունի յեռակի կիրառում՝ ա) Ֆիզիկայի յել տեխնիկայի կապը, վոր տեխնիկայի նվազումները բացարարվում են փեղիկական որենքներով. բ) վոր փեղիկայի զարգացումը պայմանավորվում ե եպօֆայի տնտեսագիտական շահերով՝ պատմական իմաստով. գ) վոր յերեսույթների որենքների ուսումնասիրությունը միացվում ե նրանց թեորիական (տեսական) բացարության հետ:

Յեթե փեղիկայի ու տեխնիկայի կապը գեռես բավականի տեղ և գտնում ծրագրի տարբեր բաժիններում, պատմական մոմենտն զգալի չափով սահմանափակված ե ուսումնական ժամերի ընդհանուր անբարարությամբ, և արտացոլում ե ծրագրի միայն յերկույթները տեղերություն:

Ինչ վերաբերվում է փեղիկական յերեսույթների թեորիային, երդ դասարանի դասընթացում խնամքով կուտակվում են և ընդգծվում են

այն առանձին յերկութիւնները, վորոնց վրա կարող ե հիմնվել նյութի կառուցվածքի մոլեկուլար-կիսնետիկ թեորիան, իսկ 7-րդ դասարանի դասընթացի սկզբում ամբողջ տարին էռտակած այդ դիտողությունները գումարվում են մի վորոշ ընդհանուր պատկերի:

Ելեկտրոնների մասին ելեմենտար հասկացողություն տրվում ե 7-րդ դասարանում — ելեկտրականության բաժնի հենց սկզբում:

Բայց յեթե թեորիայի և պրակտիկայի միասնության պրինցիպը դեռ ևս չի կարող լայն արտահայտություն գտնել առաջին կոնցենտրի ծրագրում, հենց այստեղ պետք ե՝ ամենայն վճռականությամբ ընդունել, վոր նա պետք ե լրիվ արտահայտվի աշխատանքի մեթոդում։ Հասկանալի յե, վոր ֆիզիկան պետք ե ուսումնասիրքի կապված՝ արհեստանոցում տարվող աշխատանքների հետ, աշակերտների կյանքի փորձի հետ, մյուս ուսումն. առարկաների հետ. աշակերտների լաբորատոր աշխատանքները, եքսկուրսիաներ գեպի արտադրություն, Փիզիկայի որենքների կիրառումը՝ հաշվարկման բնույթի պարզագույն խնդիրներ լուծելու համար — այս բոլորը պետք ե տեղի ունենան ուսուցման ընթացքում։

Ծրագրում թված լաբորատոր աշխատանքները դեռևս շատ համեստ տեղ են գրավում ժամերի ընդհանուր քանակում — ընդամենը՝ 13⁰, ուստի նրանց թիվը վոչ մի գեպքում չպետք ե կրածառել, բայց հնարավ վոր ե մի քանի թեմաներ փոխարինել մյուսներով այն պայմանով, վոր թեմաներն որգանական կապ ունենան կուրսի բովանդակության հետ։

Թեև գերջին բոլոր ծրագրերում ֆիզիկային վերաբերող եքսկուրսիաներին մեծ նշանակություն ե տրվում ընդհանուր ուսուցման տեսակետից, բայց ներկա ծրագրում առաջին անգամն ե, վոր նրան հատկացվում ե վորոշ ժամանակ (վորպես մինիմում), վորը զասառուները պարտավոր են ոգտագործել ըստ նշանակման, անհրաժեշտության գեպքում փոփոխելով եքսկուրսիաների տեղն ու թեմաները՝ նայած տեղական պայմաններին։

Բացի հաշվարկման խնդիրներից աշակերտներին շարունակ պետք ե վարժեցնել՝ գնաել զուտ ֆիզիկական հարցեր, վորոնք հաշվումներ չեն պահանջում։ Հաշվարկում պահանջող ֆիզիկական խնդիրներ լուծելու նկատմամբ պետք ե նշել յերկու հանգամանք. նախ՝ զասառուները պետք ե սովորեցնեն իրենց աշակերտներին կիրառել ֆիզիկայի բանաձեւերը սեալ, գործնական բորբոքություն հարցեր հաշվարկության վեցական դիմումից մեջ, վորովհետև նա, ժամանակի սղության պատճառով, պարունակում ե գիտելիքների այնպիսի փոքր շրջան, վոր թույլ չի տալիս ճառագայթյին հեներգիայի վերաբերմամբ հաշվարկում կատարել։

Ներ. Մաթեմատիկական դժվարությունների հաղթահարումը չի կարելի համարել ֆիզիկայի դասատուի անմիջական գործը։ Ֆիզիկայի դասատուն չի կարող իրեն նպատակ դնել՝ իր աշակերտներին սովորեցնել բազմազան հավասարումներ կազմել թեկուզ ֆիզիկական բովանդակություն ունեցող խնդիրների համար։ Այդպիսի նպատակի կարելի յե հասնել միայն ֆիզիկայի և մաթեմատիկայի դասատուների միասնական ջանքերում։

Ֆիզիկայի դասավանդման առաջին կոնցենտրում բավական ե, յեթե աշակերտները կարողանան կատարել ուղղակի հաշվարկում ըստ բանաձևի, իսկ հակադարձ հաշվարկումներից այնպիսիները, վորոնք սեալ իմաստ ունեն, որինակ՝ տեսակարար ջերմունակության հաշվարկումն ըստ ջերմության քանակի փորմուլայի։

Վորպեսպի ծրագրերը չմեկնաբաննեն գորպես ընդարձակման տեսդենց ունեցող, այստեղ անհրաժեշտ ե ընդգծել, վոր ծրագրերը չի յենթադրում սովորույթ զարգացնել՝ տեսակարար կշեռը հիդրոստատիկ յեղանակով վորոշելու և կալորիմետրի ական հավասարումներ կազմելու (տեսակարար ջերմունակության հաշվարկումը լաբորատոր աշխատանքի ժամանակական յեղանակով)։

Ուսումնական մատերիալ ընտրելու հարցում՝ ծրագրում վորպես հիմք ընդունված ե եներգետիկ սկզբունքը։ Ֆիզիկայի առաջին յերեք բաժիններից ամեն մեկում ընտրված ե այնպիսի մատերիալ, վոր այդ բաժնի ուսումնասիրության շնորհիվ աշակերտները կարողանան միանգամայն գիտակցորեն հաշվարկել համապատասխան տեսակի հներգիան և պատկերացում ունենան եներգիայի մի տեսակից մյուս տեսակին փոխարկվելու մասին (լույսի բաժինը չի մտնում այս սխեմի մեջ, վորովհետև նա, ժամանակի սղության պատճառով, պարունակում ե գիտելիքների այնպիսի փոքր շրջան, վոր թույլ չի տալիս ճառագայթյին հեներգիայի վերաբերմամբ հաշվարկում կատարել)։

Այս պատճառով մեխանիկական բաժնի խնդիրն ե՝ գաղափար տալ աշխատանքի մասին, սովորեցնել հաշվարկել այն և գաղափար տալ մարմնի հներգիայի մասին։

Աշխատանքի հաշվարկումը պահանջում է գիտենալ ուժն ու այն ձանապարհը, վոր նա անցնում ե։ Ուժի զաղափարը տալու համար անհրաժեշտ ե մի կողմից պատկերացում տալ այն մասին, վոր մարմինը փոխում ե իր մեխանիկական վիճակը այն պատճառով միայն, վոր յերկու մարմինների միջև միաժամանակ փոխազդեցություն ե ծագում, այսինքն պետք ե չափազանց համառոտ, բայց միավորակալ ձևով գաղափար տալ նյուտոնի որենքների մասին պատմվածքի ձևով և որինակներ բերելով, առանց նյուտոնական ձիշտ ձևակերպման։

Մյուս կողմից՝ անհրաժեշտ ե աշակերտներին ծանոթացնել ուժերի կոնկրետ տեսակներին։ Վորպես այդպիսի ուժերը ընտրված են ծանրության ուժն ու շիման ուժը, վորոնց հետ ըստ մեծի մասին դորձ հնգ ունենում աշխատանքի կատարելու,

Բավականին մանրամասն ե ուսումնասիրվում ծանրության ուժն իր բոլոր կիրառումներում, մասնավորապես հեղուկներում և գաղերում:

Տեխնիկական և գիտական պահանջներն ստիպում են դաշտափար տալ տեսակարար կշռի մասին: Տեսակարար կշռու վորոշելու համար պահանջվում է կարողանալ չափել ծավալն ու յերկարությունը: Ահա այսպիսի գործնական պահանջներով և պատճառաբանվում այն, վոր մտցրած և չափերի և չափումների յեղանակների ուսումնասիրությունը. այն ինչ նախորդ ծրագիրն առաջարկում եր հենց սկզբից անցնել չափումները, և աշակերտները չելին հասկանում այդ աշխատանքի նպատակը:

Այս բաժիններով՝ մեխանիկայի առաջ դրված խնդիր-աշխատանքի չափումը և գաղափար եներգիայի մասին—վճառված կլիներ:

Բայց վորայեզրի ուսմունքն աշխատանքի մասին աշակերտների համար վերացական չլինի, պետք ե նրանց ծանոթացնել այն գործիքներին, վոր մարդը կառուցել և աշխատանք կատարելու համար:

Այս նպատակով և ավելացրած մեխանիկայի վերջին զլուխը՝ «պարզ մեխանիզմներ», վոր ուսումնասիրում և ուժերի ձևափոխման պայմաններն այն դեպքում, յերբ աշխատանք և կատարվում պարուման առանցք ունեցող մեխանիզմներով: Վորայեզրի աշակերտները գաղափար կազմեն, թե աշխատանք կատարելիս գործադրվում են նաև այլ տիպի գործիքներ, մոցված և լարորատոր աշխատանք՝ վորոշելու համար ոգտակար գործողության գործակիցը (Ո. Գ. Գ.) — մարմինը թեք հարթությամբ բարձրացնելու ժամանակ:

Պետք ե նշել, վոր այս ծրագիրը խոշոր չափով տարբերվում է նախորդ ծրագրից նրանով, վոր առաջին կոնցենտրի սահմաններում չի տրվում զաղափար մասամբ (զանգվածի) մասին: Առաջին կոնցենտրի այն միակ դեպքում, ուր նա անհրաժեշտ է, ալսինքն ջերմության քանակի բանաձեռնում, մարմինը տաքացնելիս կամ սառցնելիս, մարմինի մասսան փոխարինված է մարմնի կշռով: Այդ փոխարինումը կատարված է, վորովհետ դպրոցները հետազոտելիս պարզել ե, վոր մասսայի գաղափարը Երդ դասարանի հասակ ունեցողները դժվար են յուրացնում:

Ջերմության բաժինը սկսում են ջերմության աղբյուրներն աչքի անցկացնելով և որինակներ բերելով, վորձել կատարելով, թե ինչպիս մեխանիկական հեներգիան փոխարիվում է ջերմության, իսկ ծախսված ջերմության հաշվին ստացվում է մեխանիկական եներգիա: Ցեղ այդ առաջին դասերը վերջանում են մշակելով այն համոզունքը, թե ջերմությունն եներգիայի մի տեսակն է:

Ջերմության բաժնի հիմնական խնդիրը վերջանում է ջերմությունը հաշվարկելու կանոնով՝ տեմպերատորի փոխուման գեպքում:

Նախորդ գլուխներն անհրաժեշտ են նրա համար, վոր աշակերտները ծանոթանան տեմպերատուրը չափելու յեղանակներին ու գործիքներին և այն յեղանակներին, վորոնցով հաղորդվում է ջերմությունը, — առանց այդ՝ յերմային եներգիայի հաշվարկումը չի կարող հիմն սվորված լինը Հետագա գլուխները — մարմինների մի վիճակից մյուսին անցնելը — տրված են այն նպատակով, վոր հասկանալի լինի ջերմային եներգիայի ոգտագործումը շողեմներնայում:

Պետք ե նշել, վոր աղբեկատ գրության փոփոխման ուսումնասիրումը կատարվում է զվարկորապես վորակական կողմից:

Ծոգետուրբինների և ջերմային մեքենաների մասին պետք ե պատմել աշակերտներին ծանոթացնել կարգով (ցուցադրել մոդելներ, դիմապողիտիվներ, կիսո ժամանակներ, զննել հքու բահաների ժամանակ) և ելեկտր. եներգիայի արտադրությունն ուսումնասիրելու ժամանակ:

Դրդ գասարանում տարեսկզին դասատուն ծանոթացնում է մարմինների բաժանելիությանը, գաղափար և տալիս մոլեկուլի մասին, գիֆուզիայի յերեւյթով ցուցադրում և մոլեկուլների շարժումը. աստիճանաբար աշակերտներին բերում և այն համոզման, վոր մարմնի ջերմային վիճակը կապ ունի նրա մոլեկուլների շարժման հետ, բայց վոր մոլեկուլների ջերմային շարժումը մասնիկների մեխանիկան շարժմանը մասնակցելուց տարբերում է յերկու հատկությամբ: Զերմային շարժան մասնակցող մասնիկների մասսարկանուրյամբ (մեխանիկայում հասարակոր և նաև մեկ նութեական կետի շարժման ուսումնասիրությունը) լեզ բառարանուրյամբ:

Ելեկտրականության բաժնում, ինչպես վերը նշեցինք, ուսումնասիրվում են ելեկտր. հոսանքի հատկությունները:

Քանի վոր վորպես հիմնական խնդիր դրված է յերեվուլյուների եներգետիկ ուսումնասիրումը, գասընթացի հիմնական հարցը պետք ե լինի հոսանքի հզորության բանաձերի հիմնավորումը: Սրա համար անհրաժեշտ է գաղափար տալ ելեկտրականության քանակի մասին, հոսանքի ուժի, դիմադրության, լարման մասին և պարզաբանել նրանց չափով գործիքների կառուցման պրիցիպներն ու չափման յեղանակները: Այդ խնդիրը բոլոր մասերի իրականացումը պահանջում է ուսումնասիրել ջուրլի և Ոմի որենքները:

Ելեկտրականության բաժնի յերկրորդ կեսը նվիրված է ելեկտր. հոսանքի մագնիսական հատկության ուսումնասիրությանն այն չափով, վոր հասկանալի լինի, թե մեխանիկական եներգիան փոխարկվում է ելեկտրական հոսանքի եներգիայի (ելեկտրոմագնիսական ինդուկցիա), և ելեկտրական հոսանքի եներգիան փոխարկվում է մեխանիկականի (ելեկտրոմատորի սկզբունքը):

Դրդ գասարանում, համեմատած Երդի հետ, հարկ կլինի անցնել ավելի մեծ քանակությամբ փորմուլներ և կատարել բազմաթիվ հաշվարկումներ:

Վորովհետև քիմիան ավելի ուշ ե մտնում վոչ լրիվ միջնակարգ դպրոցի դասընթացի մեջ, հոսանքի քիմիական ազդեցությունը և հոսանքի քիմիական գեներատորների կառուցումը ֆիզիկայի կուրսում չենք անցնում: Միայն փորձնական յեղանակով պետք ե ցուցադրել հոսանքի քիմիական ազդեցության փաստը՝ վոր պղնձարջասպի լուծույթից պղինձը զատվում ե. այս պետք ե արվի այն նպատակով, վոր այս յերկույթի միջոցով ցույց տրվի հոսանքի տեխնիկական ուղղությունը, և իրավունք ունենանք հոսանքի գեներատորի բեղեսներին անուններ տալ:

Յեզրափակելու համար դեռ յերեք դիտողություն ել պիտի անենք, վորպեսզի ծրագիրը հասկանալի լինի:

Այս ծրագրում հարցերի մի փոքր մասն առանձնացրած ե, վորպեսզի աշակերտները նրանց միայն ծանոթանան և վոչ ուսումնասիրեն:

Այդպիսի հարցեր են՝ պոլիսպատճերն ու ատամնավոր անիվները մեխանիկայում, գազային շարժիչները ջերմության բաժնում, ելեկտր. եներգիայի արտադրումն ու բաշխումն ելեկտրականության բաժնում և այլն: Այս հարցերի նկատմամբ պետք ե կիրառվեն ցուցադրումը և դասատուի պատմելը, բայց չպետք ե պահանջել աշակերտից բացատրել այս հարցերը (նրանց գիտությունը հաշվառելու կարիք չկա):

Ծրագրում տրված ե ժամանակի չափազանց կոտորակ ային մասնատում, թե այս կամ այն հարցն անցնելուն վնասան ժամանակ պետք ե նվիրել (մեծ մասամբ՝ 1-2 ժամ):

Ժամանակի այդպիսի մասնատման նպատակն ե ցույց տալ դասատուին, թե ինչ ծավալով պետք ե մշակել տվյալ հարցը (չնայած վոր նույն բերանացի ձեակերպված ե ծրագրում):

Յերկու դասարանների ծրագրումն ել ժամանակ ե հատկացված կոնստրու աշխատանքներին և ժամեր ենթողության համար:

Բայց յերկու դասարաններում ել կրկնողություն պետք ե անել դասերի սկզբում և խնդիրներ լուծելու ժամանակ:

ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԾՐԱԳՐԻ ԱՌԱՆՁԻՆ ՀԱՐՑԵՐԻ ՄԱՍԻՆ

Առաջին, նույնպես և բոլոր հաջորդ լաբորատոր աշխատանքները կատարելու ժամանակ միշտ անհրաժեշտ ե վորեւ որյեկտիվ ստուգումով գնահատել աշխատանքի վորպես, վորպեսզի աշակերտների մեջ հետաքրքրություն առաջանա գեպի աշխատանքի ժամանակը հարդար առաջին առաջին աշխատանքի ժամանակը կարելի յե ստուգեր, յեթե պողպատե գնդակը ցած չզլորվի ապակե թիթեղի վրայից, յերբ թիթեղը դրված լինի հորիզոնական տախտակի վրա: Յերկուրդ աշխատանքում պետք ե վերցնել վորոշ, այսինքն դասատուին

հայտնի կշիռ ունեցող մարմիններ, Մի քանի աշխատանքների ժամանակ աշխատանքի արդյունքները կարելի յե համեմատել աղյուսակների հետ:

2. Հեղուկի ներառում զգացվող հնչումը վերլուծելիս պետք ե ծանոթացնել շլուզների կառուցմանը և տալ Սպիտակծովյան կանալի համառոտ, բայց կենդանի նկարագիրը: Այդպիսի նկարագիրը պետք ե տալ նաև այլ տեխնիկական սարքավորումների մասին:

3. Պտտման առանցք ունեցող մեխանիզմներում կիրառված ուժերի հավասարակշռության պայմանները դուրս բերելիս խորհուրդ ենք տալիս յելակետ ընդունել կատարվող աշխատանքների հավասարությունը:

Այդպիսի մոտեցման գեպքում ամենամեծ դժվարություն ներկայացնում ե լծակի մշակումը: Այս գեպքում չափումներով պետք ե ցույց տալ բազուկի և տեղափոխման համեմատականությունը:

Յեթե աշակերտներին մատչելի յե ուժի մոմենտի գաղափարը, հարցին մետենալ նաև մոմենտների հավասարության առեսակիտից:

Վորքան անգամ բազուկը կարձացնենք, այնքան անդամ նրա վրա ազդող ուժը փոքր կլինի, և ընդհակառակը:

4. Ելեկտրականության քանակի միավորի կուլոնի մասին գաղափար ե տրվում հոսանքի քիմիական ազդեցության որենքները չեն մտնում ծրագրի մեջ, բայց այն փաստը, վոր հոսանքի անցնելու ժամանակ պղինձը նստում ե վանայի ելեկտրոդներից մեկի վրա, պետք ե ցուցադրել ելեկտրականության բաժնի հենց սկզբում, և այդ բավական ե, վոր դատված արծաթի կամ պղնձի քանակով կարելի լինի գաղափար կազմել ելեկտրականության քանակի մասին: և այդ ժամանակ պետք ե անմիջապես հաղորդել համապատասխան թիվը,¹⁾ վոր անհրաժեշտ և պղնձարջասպից այդքան պղինձ գատելու համար:

5. Վորովհետև լարման մասին գաղափար տալու հարցի վերաբերմաբը, յերբ ելեկտրականության ուսուցումն սկսում են ելեկտրական հոսանքից, մեթոդիստաների և դասազրքերի մեջ գոյություն ունի մեծ տարածայնություն, այդ պատճառով ծրագիրը չի առաջարկում վորոշ մոտեցում, և ելեկտրականության բաժնի յերրորդ գլխում զըրշագեած են մի շաբաթ հարցի առանց վորոշ դասավորության:

Ամենից ավելի փորձված յեղանակներից մեկը կլիներ հետեւյալը՝ Զուլի որենքի փորձնական ուսումնասիրումը, շղթայի տվյալ մասում հոսանքի կատարած աշխատանքն արտահայտել մեխանիկական միավորներով և այդ միջոցով գաղափար տալ լարման մասին, վորպես մի

1) Քանի ամպեր հոսանքը Մեկ ամպերը մեկ վայրկյանում կոչում ենք կուլոն, ուսուափեակ հաճախ անվանում են ամպեր-վայրկյան:

մեծության, վոր չափվում ե հոսանքի կատարած աշխատանքով, յերբ
անցնող հոսանքի քանակը մեկ կուլոն է: ¹⁾ այդ վորոշան հիման
վրա ստանալ աշխատանքի ֆորմուլը վորպես լարումի և հոսանքի ու-
ժի արտադրյալ և դուրս բերել Ոմի որենքի ֆորմուլը: Այսպիսի մո-
տեցումով հեշտ ե գաղափար տալ այն մասին, վոր վոլտմետրու առ-
տիճանաբաշխում են ըստ Եներգիական տվյալների:

Բայց վորովհետեւ այսպիսի մոտեցումը սովորական մոտեցում չե-
ռուսուցի համար, իսկ թույլ գասարաններում գժվար կլինի աշակերտ-
ների համար, ուստի ծրագիրն այս բաժնում չի կաշկանդում դասա-
տուին և իրավունք ե վերապահում նրան՝ լարումի մասին գաղափար
տալ այնպես, ինչպես ինքը մատչելի կգտնի աշակերտների համար:
Կարող ե Զոռուլի և Ոմի որենքները դասավորել այլ հետեղականու-
թյամբ, քան առաջարկված ե այստեղ, և լաբորատոր աշխատանքն ըստ
Զոռուլի՝ փոխարինել աշխատանքով ըստ Ոմի որենքի:

6. «Ելեկտրոմագնիսականություն» զիսում տրված ե միայն ժամա-
նակակից ելեկտրոմագնիսական հեռախոսը: Նրա վերլուծման ժամա-
նակ տրվում ե ամենատարրական գաղափար ձայնական տատանում-
ների մասին:

Մ Ր Ա Գ Ի Բ

ԳԵՖԵՐՈՐԴ ԴՍ.ՍՍ.ՐԸՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ինչ ե նյութ, մարմին և յերկույթ:

Ինչ ե ուսումնասիրում ֆիզիկան:

Ֆիզիկան հիմք ե կազմում տեխնիկայի և մի շարք այլ գիտու-
թուների (2 ժամ):

Սուածին բաժին. սկզբնական սեղեկուրյուններ մե-
խանի կայից:

Մաներության ուժը վորպես փոխազդեցություն յերկրի և մարմնի
միջև, ա) ծանրության ուժի ուղղությունը: Ուղղաձիգ և հորիզոնա-
կան ուղղություն: Այս ուղղությունները վորոշող գործիքներ՝ ուղղորդ
(տրամալոր) և հարթաչափ: Ուղղորդի և հարթաչափի տեխնիկական կի-
րառումը (3 ժամ):

Սուածին լաբորատոր աշխատանք. ուղղորդի և հարթաչափի ոգնու-
թյամբ ուղղաձիգ կանոննեցնել 1 շտատիվ և դնել հորիզոնական գիրքում
մեկ տախտակ (1 ժամ):

Բ. մարմինների կենոր. ծանրության մետրական չափերը (1 ժամ):

Յերկրորդ լաբորատոր աշխատանք.—Կղոել նույն ծափալն ունեցող
տարրեր մարմիններ և համոզվել, վոր նրանցից յուրաքանչյուրն ունի
վորոշ կշիռ (1 ժամ):

Գ. մարմինների տեսակարար կենոր. ինչպես են դրանից ոգալում
տեխնիկայում (1 ժամ):

Տեսակարար կենոր վորոշելու համար պետք ե չափել յերկարությունը:
Հերթուրը ծափալը վորոշելու համար պետք ե չափել յերկարությունը:

Զ. Յերկարության յել ծափալը չափումը. ա) յերկարության
չափումը. յերկարության մետրական չափերը. մասշտաբ քանոն, առև-
ելու (2 ժամ):

Յերրորդ լաբորատոր աշխատանք.—մասշտաբով վորոշել վորեն չորս-
վակի (Երանեակ) չափերը (Ն 2 աշխատանքից) (1 ժամ):

Բ. մակերեսների չափումը: Մակերեսների մետրական չափերը: Ար,
հեկտար:

գ) Մավաների չափումը. ծափալի մետրական չափերը. Մենզուրի
կառուցվածքը (2 ժամ):

1) Աշխատանքը $A = QV$: Յեթի քանակը $Q = I \cdot t$ կուլոնի, լարումը $V = I \cdot q/t$ ու-
ղաղաղ $A = I \cdot t = I \cdot \frac{q}{t}$ լուսլի: Բայց վորոշետես $O = jt$, $V = jR$, ապա կարելի $j = \frac{q}{t}$ պիզը
 $A = j^2 R t$ լուսլը: Զատուլը մեխանրական աշխատանքը ու ավոր ե, զոր ստավորապես
հավասար ե $O \cdot t$ կզմ: Այս այն աշխատանքն ե, վորով 100 դրամը կարելի $j = p/m^2$ բարձրաց-
նել 1 մետր:

Զարորդ լաբորատոր աշխատանք. մենզուրի միջոցով վորոշել պինդ մարմնի ծագալը և մի այլ անոթի տարրողությունը (1 ժամ):

Հինգերորդ լաբորատոր աշխատանք. վորոշել վորոշ պինդ և հեղուկ մարմինների և ողի տեսակաբար կշռու (3 ժամ):

զ) Մարմնի տեսակատ կուտանքը (2 ժամ):

3. Գաղափար նեման մասին (որինակներ): ձնշման ֆորմուլը՝ ձնշման տարածվելը պինդ և հեղուկ մարմինների և գազերի միջով (1 ժամ):

4. Ճնշումը հեղուկ՝ մեջ. ճնշումը հեղուկի ներսում կախում ունի հեղուկի կշռից և նրա խորությունից. կախում չունի անոթի ձևից: ձնշման ֆորմուլը բարձր (3 ժամ):

Զրմուղի և արտեզյան ջրհորի կառուցվածքը. աղբյուրների առաջցացման բացարությունը (1 ժամ):

(Յեթե հնարավոր ե, եքսկուրսիա դեպի շենքի կամ քաղաքի ջրբառուղությունը) (1 ժամ):

5. Մքնարարային նեշում. Այդ հայտնադործության պատմությունը: Փորձեր, վորոնք ապացուցում են սթնոլորտային ձնշման գոյությունը: Տորիչելու փորձը. Մթնոլորտային ձնշման չափումը սնդիկի սյան բարձրությամբ սմա-էրով և կզ ամբարով: Տեխնիկական մթնոլորտ (4 ժամ):

Մթնոլորտային ձնշման փոփոխականությունը: Մթնոլորտային ձնշումը չափող գործիք-բարոմետր: Սնդիկային և մետաղական բարոմետրեր և նրանց կիրառումը (4 ժամ):

Գազի ձնշման և ծագալի մեջ գոյություն ունեցող կախման վորակական ուսումնասիրություն: Գաղափար մահումների մասին: Գաղափար միոցավոր պոմպերի մասին (3 ժամ):

6. Հեղուկի յև գազի ազդեցույթյունը ներանց մեջ ընկդմված մարմինների վրա: Արքիմեդի որենքը հեղուկների նկատմամբ (եքսպերիմենտալ յեղանակով): Ցուցազբել գուրս մզող ուժը, վորով ազդում և գազը մարմնի վրա (5 ժամ):

Մարմինն ընկդմվում ե, տնտարեր դիրք ե ընդունում կամ յելնում և հեղուկի յերեսը՝ նայած մարմնի կշռին և հեղուկի տեսակաբար կշռին (2 ժամ):

Վեցերորդ լաբորատոր աշխատանք.—մարմնի լողալու պայմանների պարզաբանում (1 ժամ):

Արքիմեդի որենքի տեխնիկական ոգտագործումը—ջրային տրանսպորտ, սուզանավեր, լողաններ և նրանց կիրառումը ուղղմական գործում, ուղապարիկներ, գիրժաբերներ (4 ժամ):

7. Մեխանիկական շարժում. ծանրության ուժի ազդեցությունից առաջացող շարժումների որինակներ: Մարմինը շարժման մեջ դնելու այլ յեղանակներ (բացի ծանրության ուժից):

Մի մարմնի տեղափոխումը մյուսի նկատմամբ՝ կոչվում է մեխանիկական շարժում: Որինակներով պարզել հարաբերական շարժման և հարաբերական հանգստի գաղափարները: Ուղղաձիգ և շրջանաձև (պտտական) շարժման որինակներ (3 ժամ):

8. Համաչափ շարժման վորոշումը: Արագությունն արագության վորոշումը: Արագությունն արագության միավորները՝ սև (սեկ. և մ) սեկ.: Համաչափ շարժման անցած անապարհի ֆորմուլը (2 ժամ):

9. Նյուրերի իներցիան: Ուժ: Մարմնի արագության կամ ճանապարհի ձեղի փոփոխումները յերկու մարմինների փոխազդեցության արդյունք են (վերլուծել որինակներ): Որինակներից ու փորձերից դուրս բերել գաղափար նյութի իներցիայի և ուժի մասին (2 ժամ):

Դինամոմետր (ուժաչափ): Ամեն տեսակի ուժերի կարելի յե չափել ծանրության միավորներով: Ուժի պատկերացումը գրաֆիկորեն (2 ժամ):

10. Նիման ուժը: Շփման առաջացումը: Նրա տեսակները, նրա ոգտակար և վնասակար նշանակությունը: Շփման գործակիցը: Մեխանիզմներում շփումը նվազեցնելու (կամ մեծացնելու) յեղանակները:

Համաչափ շարժման պայմանները յերկու ուժերի ազդման գեղարկում (3 ժամ):

Յոթերորդ լաբորատոր աշխատանք: Շփման գործակիցի վորոշումը չոր և յուղած մակերևույթների միջեվ (2 ժամ):

11. Ուժի աշխատանքը: Որինակներով գաղափար տալ աշխատանքի մասին: Աշխատանքի միավորը—կիլոգրամումետր (կզմ):

Աշխատանքն արտահայտվում է ուժի և ճանապարհի յերկարության արտադրյալով:

Մեկ ջառու աշխատանքը $\cong 0$, 1 կզմ:

Հզորություն: Հզորության միավորները՝ կզմ սեկ. ձիառութափառ (5 ժամ):

12. Եներգիա. գաղափար եներգիայի մասին: Որինակներով պարզել կինետիկ եներգիայի և լերկրից բարձրացրած մարմնի պոտենցիալ եներգիայի գաղափարը: Եներգիայի՝ մեխանիկական պրոցեսների ժամանակ փոխարկվելու և պահպանվելու որենքը: Մշտնշենական շարժիչ պատրաստելու անհնարինությունը (4 ժամ):

13. Պարզ մեխանիզմներ: ճաշխարակներին, վոլորանին, լծակին կիրառած ուժերի աշխատանքների հավասարությունից գուրս բերել ուժերի հավասարակշռության պայմանները: Մեխանիզմների գերն այն ե, վոր ձեսափոխեն ուժի մեծությունը կամ ուղղությունը.—մեխանիկայի հիմնական կանոնների: Ցուցազբել բազմաճափարակների (պուլսապատճերի) և ատամնավոր անիվների գործողությունը (առանց ուսումնասիրելու):

Հասկացողություն ոգտակար գործողության գործակցի մասին (6 ժ.):

Ուրենորդ լաբորատոր աշխատանք.—վորոշիլ ոգտակար գործողության գործակիցը թեք հարաբերությամբ վորհե իր բարձրացնելիս (2 ժամ):

Յերկորդ բաժին. ԶԵՐՄՈՒԹՅՈՒՆ

1. Զերմությունը եներգիա յե: Զերմաղրյուներ: Զերմության նշանակությունը կուլտուրակի պատմության մեջ և ժամանակակից տեխնիկայում: Որինակներ, յերբ մեխանիկան եներգիան փոխարկվում է ջերմության և ընդհակառակը. այս որինակներից յեզրակացնել վոր ջերմությունը եներգիայի մի տեսակն է (2 ժամ):

2. Զերմության փոխանցումը.

ա) Խններորդ լաբորատոր աշխատանք. կոնվեկցիայի դիտումն հեղուկներում և գաղերում. յեզրակացություն անել կոնվեկցիայի նշանների մասին (1 ժամ):

Կոնվեկցիակի տեխնիկական ոգտագործումն՝ սենյակի ողի տաքացումը վառարանների և ռադիատորների միջոցավ. ջրային ջեռուցում, մոտորների սառնացումը, վինտիլիացիան (ողափոխումը) շենքերում. կոնվեկցիան մթնոլորտում (1 ժամ):

10-րդ լաբորատոր աշխատանք. տարբեր մարմինների տարբեր ջերմահաղործության չափումը (1 ժամ):

Պինդ մարմինների, հեղուկների և գաղերի ջերմահաղործությունը:

Տարբեր մատերիալների ջերմահաղործության տարբերությունը: Զերմության լավ և վատ հաղորդիչներ (մեկուսիչներ): Հաղորդիչ և մեկուսիչ նյութերի տեխնիկական ոգտագործումը (3 ժամ):

բ) ճառագայթում և ճառագայթակալանում (1 ժամ):

3. Մարմինների բնագարձակվելիք ջերմությունից: Պինդ, հեղուկ մարմինների և գաղերի ջերմային ընդարձակումը. Ցուցադրել մարմինների տարբեր ընդարձակումը՝ նայած բազարության և վիճակին (1 ժամ):

Գաղափար տեմպերատուրի¹⁾ մասին. տերմոմետր. Ցելսիուսի սանդղակը (շիալա): Սովորակային և սպիրտային տերմոմետրներ: Բժշկական տերմոմետր: Տերմոսետրով մարմինների տեմպերատուրը չափելու կանոնները: Ողի տեմպերատուրի չափումը (3 ժամ):

Ջրի ջերմային ընդարձակման առանձնահատկությունը և նրա նշանակությունը բնության մեջ (1 ժամ):

4. Զերմային եներգիայի չափումը. ա) Կալորիան, վորպիս միավոր ջերմության քանակը չափելու համար:

բ) Զրի տվյալ քանակի տաքացման համար անհրաժեշտ կամ սառեցման գեպքում նրա արտադրած ջերմաքանակի հաշվարկումը (2 ժամ):

1) Զերմաստիճանի:

գ) Կալորիմետրները, վորպիս գործիքներ ջերմաքանակը չափելու համար:

դ) Վառելանյութի կալորիականությունը (2 ժամ):

ե) 11-րդ լաբորատոր աշխատանք. ջրի տաքացման ոգտակար գործության գործակցի վորոշումը (1 ժամ):

դ) Փաղափար նյութի տեսակարար ջերմունակության մասին և մարմնի ջերմունակության մասին: Ցուցագրել վոր միենույն պայմաններում տարբեր նյութեր տարբեր ջերմունակություն ունեն:

է) Հաշվարկել մարմինը տաքացման համար անհրաժեշտ ջերմաքանակը կամ վոր նույն և, այն ջերմաքանակը, վորաբաղրպում ենրա սառեցման ժամանակ (5 ժամ):

ը) 12-րդ լաբորատոր աշխատանք. Պինդ մարմնի տեսակարար ջերմունակության չափումը (2 ժամ):

Կրկնողություն 8 ժամ: Եքսկուրսիաներին—3 ժամ:

Հնդամենը 117 ժամ:

Յորենորդ գասարան

ՃԵՐՄՈՒԹՅՈՒՆ (շարունակություն)

Նյութի վիճակի ջերմային փոփոխումը: ա) 13-րդ լաբորատոր աշխատանք: Դիտել պինդ մարմնի տաքացումը, նրա հալումը, ստացված հեղուկի տաքացումն ու սառեցումը և նրա պնդանալը բյուրեղային մարմնի գեպքում (1 ժամ):

բ) Բյուրեղային մարմնի հալման որենքները: Հալման վորոշ տեմպերատուրը, 1) վոր միենույն ժամանակ տվյալ նյութի պնդացման տեմպերատուրն եւ, հալման և պնդացման տեմպերատուրի հաստատությունը պրոցեսի ամբողջ ընթացքում: Ամորֆ մարմինների հալումը: Համաձայն լիածքների հալման տեմպերատուրը, համաձայն պահպանական նշանակությունը: Գաղափար հալման ջերմության մասին²⁾ (4 ժամ):

շ) 14-րդ լաբորատոր աշխատանք: Դիտել ջրի տաքացման ու յեման ընթացքն ու տեմպերատուրը (1 ժամ):

դ) Ցեոման որենքները՝ յեռման վորոշ տեմպերատուր վորոշ արտաքին պայմաններում և տեմպերատուրի հաստատունությունը յեռման ամբողջ ընթացքում: Մարմնի ծավալի փոփոխումը յեռման ժամանակը: Ցեոման տեմպերատուրի (յեռման կետի) կախումը ճնշումից: Գոլորշիացում: Գաղափար չողիացման չերմության մասին³⁾ (4 ժամ):

Մարմինների չափազանց մանր մասերի բաժանելիության որի:

1) Համան կետը:

2) Հալման թագնված ջերմության մասին:

3) Շողիացման թագնված ջերմության մասին:

հակներ: Գաղափար մոլիկուլի մասին, Դիֆուզիան հեղուկներում և գազերում: Մարմինների մոլիկուլների շարժումը:

Հալումն ու շողիացումը բացատրել մոլիկուլների շարժումով (2 ժ.):

6. Զերմային մեթենաներ. ա) Զերմության մեխանիկական համարմեք և նրա վորոշումը (2 ժամ):

բ) Եներգիայի փոխարկման և պահպանման որենքը (2 ժամ):

գ) Ուստափի շոգիմեքնայի գյուտի պատմությունն ու կառուցվածքը (2 ժամ):

դ) Շագետուրբինների և ներքին այրման շարժիչների կառուցման և գործողության ցուցադրումը (մոդելներով, դիալոգիակիվներով, կինոժապավեններով) ծանօթացման կարգով (1 ժամ):

Յանկալի յե եքսկուրսիա դեպի զավոդի մեքենական բաժինը կամ դեպի շոգեքարշային դեպո (1 ժամ):

Տերորդ բաժին. Եւեկտրականություն

1. ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԵԼԵԿՏՐԱՅՈՒԹՅՈՒՆ

Ելեկտրացում շփումից: Յերկու տեսակի լիցքեր: Լիցքերի փոխազդեցությունը, ելեկտրոսկոպ, ելեկտրոստատիկ ինդուկցիա: Գաղափար ելեկտրոնների մասին: Շփումից առաջացող ելեկտրացումն ու ելեկտրոստատիկ ինդուկցիան բացատրել ելեկտրոնների տեղափոխումով: Ելեկտրական կայծ և կայծակ (4 ժամ):

ԵԼԵԿՏՐԱԿԱՆ ՀՈՍԱՆՔԻ ՇՂԹԱՆ

ա) Ինչից և ստացվում ելեկտրական հոսանքը: Խոսակցության մեջ պարզել, թե աշակերտաները հոսանքի գոր գործողության են ծանոթ: Ցուցադրել լուսավորության ցանցին ուղղած հոսանքի մեխանիկական, չը բժային, քիմիական և մագնիսական գործողությունները: Աշակերտների ներկայությամբ հավաքել վորեւ գալվանական ելեմենտ և ցուցադրել, վոր նրանից նույնպես և ակումուլյատորից (առանց կառուցումը բացատրելու) կարելի յե ստանալ նույն մեխանիկական, չերմային, քիմիական և մագնիսական գործողություններն, ինչպես ստանում ենք ցանցի հոսանքից: Գաղափար ելեկտրական եներգիայի մասին, գաղափար հոսանքի մասին, վորպես ելեկտրոնների մի հեղեղի մասին (3 ժամ):

բ) Փորձով բաժանել մարմինները՝ հաղորդիչների և մեկուսիչների: Ցուցում, վոր այս բաժանումը պայմանական եւ Պարզել՝ ինչ ասել ե «ելեկտրական հոսանքի շղթա» ինչ կնշանակի՝ փակել և բացել զղթան: Շղթայի բաղադրիչ մասերը՝ գեներատոր (հոսանքալբույր) լարեր, հոսանքի եներգիան սպառող գործիքներ, գործիքներ հոսանքը կառավարելու համար բաց թողնելու և անջատելու համար (2 ժամ):

2) տարբեր տեսակի ներարկիչներ: Ախեմատիկ պատկերացում՝ շղթայի սխեմայի գծագրումը (2 ժամ):

դ) 15-րդ լարուատու աշխատանք: Շղթայի տարբեր բաղադրիչ մասերի զննումը, շղթայի սարումը, շղթայի կցուսը և անջատումը (1 ժամ):

ե) Քիմիական կամ մագնիսական գործողությունից յեզրակացություն հանել հոսանքի ուղղության մասին և անուններ գնել գեներատորների ըմեռներին:

Գաղափար զավանումետրի մասին, վոր ցույց ե տալիս հոսանքի գործությունը և ուղղությունը շղթայում (1 ժամ):

զ) Գաղափար ելեկտրականության քանակի մասին: Ելեկտրականության քանակի միավորը—կուլոն:

Գաղափար հոսանքի ուժի մասին: Հոսանքի ուժի միավորը—ամպեր: Գաղափար ամպերմետրի մասին (3 ժամ):

16-րդ լարուատու աշխատանք: Ամպերմետրի ցուցումների ստուգումը ըստ հոսանքի քիմիական գործողության: Ցուցադրել, վոր շղթայի բոլոր մասերում հոսանքի ուժը հաստատուն ե (նույնն ե) (2 ժամ):

ը) Գաղափար գիմադրության մասին:

Դիմադրության միավորը—ոմ: Գաղափար գիմադրությունը չափելու մասին շղթայամասը փոփոխելու միջոցով: Դիմադրության մագղիսներ (2 ժամ):

թ) Հաղորդիչ գիմադրության որհնքները՝ կախումը յերկարությունից, կարգածքից, նյութից (2 ժամ):

ժ) Նյութի տեսակաբար գիմադրությունը: Հաղորդիչի գիմադրության փորձուլը (2 ժամ):

ի) Ռեսուտատուներ (1 ժամ):

3. ՀՈՍԱՆՔԻ ՈՐԵՆՔՆԵՐԸ

Գաղափար լարումի մասին: Լարումի միավորը—վոլտ: Ամիրերները շղթայի վարեկ մասի համար: Ջուլ-լենցի որենքը: Գաղափար որենքը շղթայի վարեկ մասին: Հոսանքի աշխատանքի և հզորությունների կառուցվածքի մասին: Հոսանքի աշխատանքի և հզորության բանաձեւերը: Ելեկտրական ջերմացնող գործիքները, ելեկտրայեն, ելեկտրական լուսավորություն (13 ժամ):

17-րդ լարուատու աշխատանք: Բնարեւ վորեւ թեմա, վոր կապ ունենա կամ Ոմի որենքի կամ Զոռուլ-լենցի որենքի հետ:

(Եքսկուրսիա դեպի ելեկտրայենի ցեխը (13 ժամ):

4. ՀՈՍԱՆՔԻ ՄԱԳՆԻՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ

1. Բնական և արհեստական մագնիսներ: Բնական մագնիս: Գաղափար պողպատե շերտի մագնիսացման մասին (1 ժամ):

18-րդ լարուատու աշխատանք: Բնեաներ և նեյտրալ (շեզոք) գիծ: Միենույն մագնիսի յերկու բնեաների տարասեռությունը: Ինչպես են մագնիսի ոգնությամբ վորոշում աշխարհի չորս կողմերը: Բնեաների

անունները, բեվեռների փոխազդեցությունը, Մագնիսական դաշտ, ուժագիծների և պայտաձև մագնիսի ուժագիծները: Կոմպաս (կողմնացույց) (2 ժամ):

2. Ելեկտրոմագնիսականություն ա) Երշտեղի փորձը՝ հոսանքի ազդեցությունը մագնիսական սլաքի վրա: Ուղղագիծ հոսանքի և սոլենոիդի մագնիսական դաշտը: Ուղղի մագնիսի նմանությունը այն սոլենոիդին, վորի միջոցով հոսանք և անցնում (3 ժամ):

բ) Մագնիսացում հոսանքով: Ելեկտրոմագնիս. Նրա կիրառումը՝ ելեկտրոմագնիսական կրան, հեռագիր, հեռախոս, զանգ (6 ժամ):

գ) Փորձով ցուցադրել 2 մագնիսների փոխազդեցությունը և փոխազդեցությունն այն յերկու կոճերի, վորուցով ելեկտր. հոսանք և անցնում:

Ցուցադրել ելեկտրոմոտորի սկզբունքը, ցուցազրել ամպերմետրի սկզբունքը (3 ժամ):

3. Ելեկտրոմագնիսական ինդուկցիա. ա) Ֆարադեյի հայտնագործման պատմությունը (2 ժամ):

բ) 19-րդ լաբորատոր աշխատանք. առաջացնել հոսանքի ինդուկցիայի հիմնական յերեւյթները մագնիսով և հոսանքով (2 ժամ):

գ) Լինցի կանոնը (1 ժամ):

դ) Գալտրի (ՎԻՏՕՒ) պտումը մագնիսական դաշտում: Գաղափար փոփոխական հոսանքի մասին: Դինամոյի կառուցման սկզբունքը (5 ժամ):

ե) Փորձեր հոսանքի տրանսֆորմացիայի: Տրանսֆորմատորների կառուցվածքը: Ելեկտրական էներգիայի հեռութեղեր ուղարկելը: Գաղափար ելեկտրոններգիտայի արտադրության և բույնման մասին (4 ժամ): Եքսկուրսիա դեպի ելեկտրոկայան (1 ժամ):

Տարրուգ բաժին. մի քանի տեղեկություններ լույսի մասին

1. Լույսի տարածվելը համասեն միջավայրում: Տարածվելու ուղղագրությունը: Ստանալ սավեր և կիսաստվեր: Նկարի միջոցով բացատրեաբեկի և լուսնի խավարումները (2 ժամ):

2. Աերեվույր յերկու միջավայրերի սահմանում՝ ցուցադրել վոր յերկու միջավայրերի սահմանում միաժամանակ տեղի յեն ունենում անդրադարձում և բեկում: Անդրադարձման որենքները (2 ժամ):

բ) Հարթ հայելում ստացվող պատկերը: Պերիսկոպ: Անդրադարձում սփերիկ հայելիներից: Գողավոր սփերիկ հայելում ստացվող պատկերը: Պրոյեկտոր (2 ժամ):

3. Բեկող միջավայրեր: Ցուցադրել ձառագայթների բնիքը զուշ գանձել նիստեր ունեցող ապակե թիթեղի միջով և պրիզմայի միջով:

Գաղափար լուսանկարչական ապարատի և պրոեկցիոն (մոդական) գաղափարի մասին: Գաղափար աչքի կառուցվածքի մասին (4 ժամ):

4. Սպիտակ լույսի տարալուծումը գույների: Ցուցադրել սպիտակ լույսի տարալուծումը զունավոր ճառագայթների և սպեկտրալ ճառագայթների գումարումը սպիտակ լույսի: Փորձով բացատրել թափանցիկ և անթափանցիկ մարմինների գույները: Գաղափար ինֆրակարգի և անթափանցիկ մարմինների մասին (2 ժամ): Կրկնողություն 8 ժամ: Եքսկուրսիաներին՝ 6 ժամ: Ընդամենը կրկնողություն՝ 8 ժամ:

117 ժամ:

Ութերորդ, ինեներորդ յեզ տաերորդ գասարաններ

ԲԱՅԱՏՐԱԿԱՆ

8-րդ՝ 10-րդ դասարանների ֆիզիկայի կուրսը ներկայացնում են ֆիզիկայի սիստեմատիկ կուրսի յերկրորդ կոսցենտրը. Նրա խնդիրն եւ

1) Լրացնել խորացնել և սիստեմի բերել ֆիզիկայի վերաբերյալ այն գիտելիքները, վոր ձեռք բն բերել աշխատանքները վոչ լրիվ միջնակարգ դպրոցում:

2) Եքսպերիմենտի վրա հիմնված բացատրություն տալ ֆիզիկական յերեւոյների այն առեսությունների, վորոնք անհրաժեշտ են Մարքս լենինյան աշխարհայցք մշակելու համար:

3) Ցույց տալ վոր ֆիզիկական գիտելիքների չնորհիվ են բացատրվում բնության յերեւոյներն ու տեխնիկայի նվաճումները:

8-10-րդ դասարանների ֆիզիկայի կուրսն ընդունելով մի շարք այնպիսի նոր հարցեր, վորոնք ամսներն չեն շոշափել 6-7-րդ դասարաններում, միաժամանակ պարունակում են առանձին հարցեր, վորոնք ալգեն ծանոթ են աշխատանքներին ելեմենտար ձևով: Վերջնաներին մշակումը, թե ըստ բնույթի և թե ըստ ծագալի պետք են յապես տարբերվող վոր լրիվ միջնակարգ դպրոցի դասընթացից:

Յեթե ֆիզիկայի սկզբնական ուսումնակիրության ժամանակ ֆիզիկական որենքները գույս բերելու հիմնական յեղանակը ձանաշվում է երսպերիմենտը, վորի համար կիրառվում են ինքնուրույն լարուատոր աշխատանքներ աշակերտների կողմից և գեմոնատարացիաներ գումարությունը կողմից, այսուհետեւ յերկրորդ կոնցենտրում աշակերտներին ստառագույն պետք ե ցույց տալ մաթեմատիկական մեթոդի նշանակությունը վոչ պետք և ցույց տալ միայն ֆիզիկական որենքներն արտահայտելու համար, այլև նըանց ապացուցելու և անալիզ կատարելու համար՝ այն դեպքերում, յերբ առանձին դժվարություն չի ներկայացնում:

Որինակ՝ մաթեմատիկորեն կարելի յեզ որս բերել հավասարաչափ-փոփոխական շարժման որենքները, լուսավորվածության որենքները, ինպարի լորդ ֆոկուների հավասարություն և այլն:

Սահայն չնայած, վոր պարտադիր լոնդիր և որինակներով ցույց տալ մաթեմատիկայի նշանակությունը ֆիզիկական որենքները դուրս բերելու հարցում, ֆիզիկայի գուատուն չպետք ե հրապարակ այն դեպքերում, վոչ պարագաների աչքի կողմով, վոչ մի դեպքում իրեն նպատակ չպետք ե դնի ֆիզիկայի կողմով:

գասավանդումը մաթեմատիկացնել հիշելով, վոր ընդհուպ մինչ 10-րդ դասարանն եկաղերիմենաը Փիզիկայում պետք և ունենա վճռութական նշանակություն:

Դասընթացի մի քանի տեղերում աշակերտների մաթեմատիկական պատրաստականությունը գեռևս է տա կմնա Փիզիկայի պահանջներից:

Որինակ՝ հավասարաշափ-փոփոխական շարժումն անցնելու ժամանակ աշակերտները գեռևս սովորած չեն լինում լուծել լրիվ քառակուսի հավասարումները, զուգահեռակողմի կանոնով վեկտորների գումարումն ուսումնասիրելիս կամ տատանողական շարժման վերլուծման ժամանակ նրանք գեռևս յեռանկյունաչափություն չեն իմանում:

Նման բոլոր գեղագերում Փիզիկայի դասատուները պետք են հեշտացնեն իրենց աշխատանքը: Հավասարաշափ-փոփոխական շարժումն ուսումնասիրելիս նրանք սահմանափակում են պարզագույն, միևնույն ժամանակ գործնականում ավելի հաճախ հանդիպող գեղագերով, վորոնք լուծում են վոչչըրիվ (թերի) քառակուսի հավասարումներով: Անկյունով ազգող արագությունների կամ ուժերի գումարման ժամանակ պետք ետալ հարցի եքսպերիմենտալ կամ գրաֆիկական լուծումը, առանց նեղացնելու նրա բովանդակությունը: Տատանողական շարժումը վերլուծելիս պետք ետալ արագության կամ արագացման փոփոխման վրակական բնույթը, վորը բղիքում եւ կառուցումից, և չդիմել արագությունների մաթեմատիկական արտահայտություններին:

Բայց գեղի Փիզիկական յերեւյթների ուսումնասիրությունն այլպիսի մոտեցում ունենալու զեղքում անհրաժեշտ եւ, վոր մաթեմատիկայի և Փիզիկայի ուսուցիչները համաձայնության գան այն մասին, վոր մատեմատիկայի համապատասխան մասերն անցնելիս մատեմատիկայի դասերին խնդիրների ձևով մշակվեն Փիզիկայի այն հարցերը, վորոնք իրենց ժամանակին չեն վճռվել Փիզիկայի դասերին, մաթեմատիկական պատրաստականության պահասորդի պատճառով:

Որինակ՝ քառակուսի հավասարումներն անցնելիս պետք են վճռվեն հավասարաշափ-փոփոխական շարժման վերաբերող այն խնդիրները, վորոնք վճռվում են լրիվ քառակուսի հավասարումներով: Ծեղանկյուն յեռանկյուններն ուսումնասիրելիս պետք են լուծվեն գումարվող արագությունների և արդյունարարի հաշվարկման խնդիրներ՝ ինչպիսի անկյուններ վոր կազմելիս լինեն նրանք:

